Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-723-27.11.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 77-րդ կետում «(քաղվածք)» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել 78-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«78) բանկային հաշվի ամփոփ տեղեկություն՝ հարկ վճարողի բանկային հաշվի, արժույթի, հարկային տարվա հունվարի 1-ի եւ դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա մնացորդի, ինչպես նաեւ հարկային տարվա ընթացքում բանկային հաշվին մուտքագրված գումարների հանրագումարի եւ ելքագրված գումարների հանրագումարի վերաբերյալ տվյալներ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 341-րդ հոդվածի 4-րդ մասում՝

1) 3-րդ կետում «ներառյալ» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել 4-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4) բանկային հաշվի քաղվածքը ստանալու վերաբերյալ հարկ վճարողին կատարված հարցման դեպքերը, երբ ստուգման ընթացքը կասեցվում է մինչեւ բանկային հաշվի քաղվածքը ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) ստանալու օրը ներառյալ, բայց ոչ ավելի, քան 180 օրով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 350.1-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 350.1. Բանկային հաշվի քաղվածքի եւ ամփոփ տեղեկությունների ստացումը*

1. Օրենսգրքի 332-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային հսկողության շրջանակներում ռիսկերի գնահատման նպատակով հարկային մարմինը հարկ վճարողի յուրաքանչյուր բանկային հաշվի ամփոփ տեղեկությունները էլեկտրոնային համակարգի միջոցով ստանում է Հայաստանի Հանրապետության առեւտրային բանկերից՝ Հայաստանի

Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով՝ մինչեւ շահութահարկի հաշվարկի, իսկ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց դեպքում՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը: Սույն մասով նախատեսված էլեկտրոնային համակարգի տեխնիկական բնութագիրը եւ տեղեկությունների փոխանցման կարգը եւ փոխանցվող տվյալների տիպային ձեւաչափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով հարկային մարմնի հետ:

2. Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված հարկային հսկողության շրջանակներում հարկ վճարողի բանկային հաշվի քաղվածքը (հարկային հսկողության ժամանակահատվածի) ստանալու նպատակով հարկային մարմինը հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջի միջոցով հարցում է կատարում հարկ վճարողին, որը պարտավոր է հարցումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող հարկ վճարող ֆիզիկական անձինք՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմնին տրամադրել առեւտրային բանկի կողմից հաստատված բանկային հաշվի քաղվածքը: Սույն մասով նախատեսված հարցումը էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով ծանուցելու դեպքում համարվում է ստացված հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու հաջորդ օրը: Հարկային մարմնի կողմից սույն մասով սահմանված հարկ վճարողին հարցման կարգը եւ ձեւը, հարկ վճարողի կողմից բանկային հաշվի քաղվածքի տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:

3. Հարկ վճարողի կողմից սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հարկային մարմնի հարցումը ստանալուց հետո նույն մասով սահմանված ժամկետներում բանկային հաշվի քաղվածքի չտրամադրման դեպքում, հարկային մարմինը բանկային հաշվի քաղվածքը ստանում է դատարանի որոշման հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: »:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 350.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթները տարածվում են հետեւյալ ժամկետներում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) ներկայացնելու պարտականություն ունեցող ֆիզիկական անձանց նկատմամբ.

1) 2023 թվականի հարկային տարվա համար՝

ա. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության եւ (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, բացառությամբ

Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի 3-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված անձանցից,

բ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ եւ ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առեւտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ),

գ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք 2023 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն.

2) 2024 թվականի հարկային տարվա համար՝

ա. 2024 թվականի ընթացքում վարձու աշխատող համարված՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ,

բ. 2024 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում հարկվող եկամուտ ստացած՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ,

գ. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության եւ (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, բացառությամբ Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի 3-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված անձանցից,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2023 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ եւ ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առեւտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր փայատեր, անդամ),

ե. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

զ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք 2024 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն,

է. սույն պարբերության 1-ին կետում նշված ֆիզիկական անձինք.

3) 2025 թվականի եւ դրան հաջորդող հարկային տարիների համար՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ.

4) Սույն պարբերության 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված կարգավորումները չեն տարածվում 2023 թվականի եւ 2024 թվականի հաշվետու տարիների համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) չներկայացնող այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերող տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն՝ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն համարվող՝ հարկվող եկամուտների մասով:

3. Հարկային մարմինը սույն օրենքի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 350.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված հարկ վճարողի յուրաքանչյուր բանկային հաշվի ամփոփ տեղեկությունները 2023 թվականի հարկային տարվա համար ստանում է մինչեւ 2024 թվականի հոկտեմբերի 1-ը:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-723-27.11.2023-ՏՀ-011/1
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության~~ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 77-րդ կետում «(քաղվածք)» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել 78-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«78) բանկային հաշվի ամփոփ տեղեկություն՝ հարկ վճարողի բանկային հաշվի, արժույթի, հարկային տարվա հունվարի 1-ի եւ դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա մնացորդի, ինչպես նաեւ հարկային տարվա ընթացքում բանկային հաշվին մուտքագրված գումարների հանրագումարի եւ ելքագրված գումարների հանրագումարի վերաբերյալ տվյալներ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 341-րդ հոդվածի 4-րդ մասում՝

1) 3-րդ կետում «ներառյալ» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել 4-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4) բանկային հաշվի քաղվածքը ստանալու վերաբերյալ հարկ վճարողին կատարված հարցման դեպքերը, երբ ստուգման ընթացքը կասեցվում է մինչեւ ~~Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 77-րդ կետով սահմանված տեղեկություններին համապատասխանող~~ բանկային հաշվի քաղվածքը ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) ստանալու օրը ներառյալ, բայց ոչ ավելի, քան 180 օրով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 350.1-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 350.1. Բանկային հաշվի քաղվածքի եւ ամփոփ տեղեկությունների ստացումը*

1. Օրենսգրքի 332-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային հսկողության շրջանակներում ռիսկերի գնահատման նպատակով հարկային մարմինը հարկ վճարողի յուրաքանչյուր բանկային հաշվի ամփոփ տեղեկությունները էլեկտրոնային համակարգի միջոցով ստանում է Հայաստանի Հանրապետության առեւտրային բանկերից՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով՝ մինչեւ շահութահարկի հաշվարկի, իսկ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող

ֆիզիկական անձանց դեպքում՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը:

Սույն մասով նախատեսված էլեկտրոնային համակարգի տեխնիկական բնութագիրը եւ տեղեկությունների փոխանցման կարգը եւ փոխանցվող տվյալների տիպային ձեւաչափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով հարկային մարմնի հետ:

2. Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված հարկային հսկողության շրջանակներում հարկ վճարողի բանկային հաշվի քաղվածքը (հարկային հսկողության ժամանակահատվածի) ստանալու նպատակով հարկային մարմինը հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջի միջոցով հարցում է կատարում հարկ վճարողին, որը պարտավոր է հարցումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող հարկ վճարող ֆիզիկական անձինք՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմնին տրամադրել առեւտրային բանկի կողմից հաստատված բանկային հաշվի քաղվածքը: Սույն մասով նախատեսված հարցումը էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով ծանուցելու դեպքում համարվում է ստացված հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու հաջորդ օրը:

Հարկային մարմնի կողմից սույն մասով սահմանված հարկ վճարողին հարցման կարգը եւ ձեւը, հարկ վճարողի կողմից բանկային հաշվի քաղվածքի տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:

3. Հարկ վճարողի կողմից սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հարկային մարմնի հարցումը ստանալուց հետո նույն մասով սահմանված ժամկետներում բանկային հաշվի քաղվածքի չտրամադրման դեպքում, հարկային մարմինը բանկային հաշվի քաղվածքը ստանում է դատարանի որոշման հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: »:

Հոդված 4. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 350.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթները տարածվում են հետեւյալ ժամկետներում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) ներկայացնելու պարտականություն ունեցող ֆիզիկական անձանց նկատմամբ.

1) 2023 թվականի հարկային տարվա համար՝

ա. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության եւ (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, բացառությամբ Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի 3-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված անձանցից,

բ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ եւ ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առեւտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ),

գ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք 2023 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն.

2) 2024 թվականի հարկային տարվա համար՝

ա. 2024 թվականի ընթացքում վարձու աշխատող համարված՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ,

բ. 2024 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում հարկվող եկամուտ ստացած՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ,

գ. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության եւ (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, բացառությամբ Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի 3-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված անձանցից,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2023 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ եւ ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առեւտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր փայատեր, անդամ),

ե. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

զ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք 2024 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն,

է. սույն պարբերության 1-ին կետում նշված ֆիզիկական անձինք.

3) 2025 թվականի եւ դրան հաջորդող հարկային տարիների համար՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ.

4) Սույն պարբերության 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված կարգավորումները չեն տարածվում 2023 թվականի եւ 2024 թվականի հաշվետու տարիների համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) չներկայացնող այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերող տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն՝ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն համարվող՝ հարկվող եկամուտների մասով:

3~~2~~. Հարկային մարմինը սույն օրենքի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 350.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված հարկ վճարողի յուրաքանչյուր բանկային հաշվի ամփոփ տեղեկությունները 2023 թվականի հարկային տարվա համար ստանում է մինչեւ 2024 թվականի հոկտեմբերի 1-ը:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-723-27.11.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) վերնագրի հիշատակումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված իրավադրույթում ամրագրված հաջորդականությանը, որի համաձայն. «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»: Հաշվի առնելով վերոգրյալը 1-ին հոդվածում՝ «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է

			առաջարկում ենք լրացնել «հոկտեմբերի 4-ի» բառերից հետո:		
2.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենսգրքի 341-րդ հոդվածի 4-րդ մասում լրացվող նոր՝ 4-րդ կետի համաձայն. «4) բանկային հաշվի քաղվածքը ստանալու վերաբերյալ հարկ վճարողին կատարված հարցման դեպքերը, երբ ստուգման ընթացքը կասեցվում է մինչեւ Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 77-րդ կետով սահմանված տեղեկություններին համապատասխանող բանկային հաշվի քաղվածքը ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) ստանալու օրը ներառյալ, բայց ոչ ավելի, քան 180 օրով:»: Վերոնշյալ դրույթում Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 77-րդ կետին հղում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 77-րդ կետում սահմանված է «բանկային հաշվի քաղվածք» հասկացությունը, այն է. «77) բանկային հաշվի քաղվածք՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած իրավական ակտերով նախատեսված տեղեկություններ պարունակող փաստաթուղթ (քաղվածք):»: Հարկ է նկատել, որ փաստաթուղթը բանկային հաշվի քաղված կարող է որակվել միայն եթե պարունակում է մեջբերված դրույթում նշված տեղեկությունները: Հետեւաբար «բանկային հաշվի քաղվածք» հասկացության կիրառումն արդեն իսկ բավարար է Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 77-րդ կետով սահմանված տեղեկություններին համապատասխանությունն արտահայտելու համար:	Ընդունվել է	Ընդունվել է

			Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենսգրքի 341-րդ հոդվածի 4-րդ մասում լրացվող նոր՝ 4-րդ կետը՝ կիրառելով միայն սահմանված հասկացությունը և՛ «կասեցվում է մինչև» բառերից հետո հանել «Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 77-րդ կետով սահմանված տեղեկություններին համապատասխանող » բառերը:		
3.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Հարկային օրենսգրքի 350.1-ին հոդվածի 1-ին մասից հետո շարադրված պարբերությունը միավորել 1-ին մասին, իսկ նույն հոդվածի 2-րդ մասից հետո շարադրված պարբերությունը՝ 2-րդ մասին:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասին հաջորդող կետերի բաժանված չհամարակալված պարբերությունն առաջարկում ենք համարակալել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է. «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն	Ընդունվել է	Ընդունվել է

			համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:» Հիմք ընդունելով վերոգրյալը 1-ին մասին հաջորդող կետը խմբագրվել է որպես 2-րդ կետ, որի արդյունքում հաջորդող կետերի համարակալումը փոփոխվել է:		
6.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետում «Հանրային ծառայության մասին» օրենքի անվանման հիշատակման մեջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն՝ առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված իրավադրույթը, որի համաձայն. «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ», 2-րդ կետի «գ» և «ե» ենթակետերում օրենքների անվանման հիշատակման մեջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերին;	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 350.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն. «Սույն մասով նախատեսված էլեկտրոնային համակարգի տեխնիկական բնութագիրը և տեղեկությունների փոխանցման կարգը և փոխանցվող տվյալների	Ընդունվել է	Ընդունվել է

			տիպային ձևաչափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով հարկային մարմնի հետ:» Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 350.1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված է. «Հարկային մարմնի կողմից սույն մասով սահմանված հարկ վճարողին հարցման կարգը և ձևը, հարկ վճարողի կողմից բանկային հաշվի քաղվածքի տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:»: Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային համակարգի տեխնիկական բնութագրի և տեղեկությունների փոխանցման կարգի և փոխանցվող տվյալների տիպային ձևաչափի, ինչպես նաև հարկային մարմնի կողմից հարկ վճարողին հարցման կարգի և ձևի, հարկ վճարողի կողմից բանկային հաշվի քաղվածքի տրամադրման կարգի Կառավարության կողմից ընդունման նախատեսվող ժամկետները Նախագծի անցումային դրույթներում սահմանված չեն: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի		

			ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաեւ՝ 1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից. 2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:»: Առաջարկում ենք Նախագծի անցումային դրույթներում սահմանել Նախագծից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման նախատեսվող ժամկետները, ինչպես նաեւ Նախագծի այն մասերը, որոնք գործելու են համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո: Հիմք ընդունելով վերոգրյալը Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ (խմբագրված 3-րդ) մասից հետո լրացվել է նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:»		